ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**13 հունվարի 2020 թվականի N 07 -Ա**

**«ՆՈՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, ՀՀ կառավարության 2010թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ մասով, հիմք ընդունելով «Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի նիստի N 4 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի գրավոր եզրակացությունը՝

**կ ա ր գ ա դ ր ու մ եմ.**

1. «Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտրված տնօրեն Վարդիկ Առաքելյանի հետ 2020թ. հունվարի 14-ից կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով /14.01.2020թ.-14.01.2025թ./՝
2. «Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Ամալյա Առաքելյանին 2020 թվականի հունվարի 14-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

13.01.2020

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

POGHOSYAN HUNAN 4005640117

2020թ. հունվարի 13